

Յ. Ա. ՅՈՒՐԿԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՅԵՎ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆ
ՇԱՐԺՄԱՆ
ՆՈՐ ՎԵՐԵԼԲԸ

ՀԱՎԵԼՎԱԾ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՌՈՒԹԵԼԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՈՇՈՒՄԸ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Մ. Փիլ

338.14.

3դ-94

ԽԱՆՍ ԺՈՂՈՎ-ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱՎՋՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1 9 3 1 - ՈՌԱՅՈՎ-ԴՈՆ

338-14

30-94

17 FEB 2010

Յ. Ա. ՇՈՒՐԱԿԻՆ

**ԱՀԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ
ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ**

ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՌԱՋ ԵՆՔ ԿԱՆԳՆԱԾ

Տասնյակ հազարավոր կոլտնտեսությունների աշխատանքի հաջող ընթացքը, կոլտնտեսությունների բուռն աճը հնարավորություն դարձան միմիայն կուսակցության գլխավոր գծի անշեղ և ճիշտ կիրառման պայմաններում:

Գյուղատնտեսության վերակառուցման գործում միլիոնավոր կոլտնտեսականներ՝ այժմ դարձել են խորհրդային իշխանության կայուն հենարաններ:

Միլիոնավոր անհատական-չքավոր ու միջակներ մըտնում են կոլտնտեսությունների մեջ, թողնում են տնտեսությունը վարելու անհատական ձեռք, խորհ, տնտեսությունների (СОВХОЗЫ), կոլեկտիվ տնտեսությունների և մեքենատրակտորային կայանների փորձով նրանք հասկացել են կոլեկտիվ աշխատանքի առավելությունները:

Ամեն մի կոլտնտեսության, ամեն մի կոլտնտեսականի առաջ կանգնած և կոլտնտեսության լայնացման ու կայունացման խնդիրը: Այս խնդրի հիմնականը դա գործնական



4966957

հարցերի լուծումն է, գործնական կարգ ու կանոնի վորոշումը, վորով հնարավոր լինի լավագույն կերպով ոգտագործել ամեն մի կոլտնտեսականի եներգիան, արտադրական ուժն ու միջոցները:

Պարզ է, վոր այս խնդիրը միանգամից հնարավոր չի լուծել: Այս հարցը լուծելու համար պետք է հիմնվել աշխատանքային այն փորձառության վրա, վորն արդեն ստացվել է, կա յեվ ամրապնդվել է բազմաթիվ կոլտնտեսությունների մեջ:

Մեր կոլտնտեսական նվաճումները շատ մեծ են: Արդեն 7 միլիոն գյուղացիական տնտեսություններ կամավոր կերպով միավորվել են կոլտնտեսությունների մեջ: Մեր յերկրում, արդեն համայնեցրած հողային հանգին տարածություններ մշակվում են կոլեկտիվ կերպով: Կոլտնտեսություններում կենտրոնացած է ալեկի քան 5 միլիոն գլուխ աշխատող անասուն, ալեկի քան 1 միլիոն 700 հազար կով, 4 միլիոն մանր անասուն:

20 միլիոն աշխատունակ կոլտնտեսություններ վողկավորված կոլեկտիվ աշխատանքով, գործնական կերպով արդեն սկսել են նոր կյանք կառուցել:

Կոլտնտեսությունների դաշտերում մասսայական չափերով գործադրվում են աշխատանքի սոցիալիստական ձևերը, վորոնք վերցված են գործարանների ու ֆաբրիկաների վորոշից:

Մենք նոր հաղթանակների առաջ ենք կանգնած:

Կուսակցության կենտրոնական Կոմիտեյի ղեկավարերյան (1930 թ.) ալենումը վորոշեց 1931 թվի ընթացքում կոլեկտիվացման ընթացիկ խնդիրները: Սորհրդային Միության մեջ յեղած գյուղական տնտեսությունների 50 տոկոսը: Հացահատիկային աշխատանքում, — հատկապես Կովկաս, Դաշ-



24368-99

տային Ուկրաինա, Միջին ու Ստորին Վոլգա, — պիտի կոլեկտիվացվին գյուղական տնտեսությունների 80 տոկոսը:

Այս վորոշումը ինչ հիմքեր ունի: Ծանր արդյունաբերության, խորհրդային տնտեսությունների, մեքենա-տրակտորային կայանների արագ աճման հնարավորությունների, ինչպես նաև գյուղացիական չքավոր-միջակ մասսաների դեպի կոլտնտեսություններն ունեցած վճռական շրջադարձի հիման վրա յե արված այս վորոշումը:

Այս տարվա (1931 թ.) վերջին կոլտնտեսությունների մեջ պիտի լինեն 30 միլիոն աշխատունակ կոլտնտեսականներ, կոլտնտեսությունները պիտի ունենան մոտ 10 միլիոն գլուխ աշխատող անասուն, մոտ 4 միլիոն կով, մոտ 5 միլիոն խոզ:

1931 թվին 1040 մեքենա-տրակտորային կայաններ պիտի շինվին: Ամբողջ Միության մեջ այս հսկա շինարարության նախապատրաստական աշխատանքները վաղուց են ծավալվել:

Կոլտնտեսությունների շինարարության նվաճումները կուսակցության գլխավոր ղեկի ճշտությունն են ապացուցում: Այս նվաճումներն ապացուցում են, վոր գյուղը սոցիալիստական վերակառուցման յինթարկելու հարցում կուսակցության ընդունած դիժն ուղիղ է: Բատրակները, չքավորներն ու միջակները ճիշտ են հասկացել կուսակցության գլխավոր դիժը:

Կոլտնտեսական շինարարության նվաճումները, համատարած կոլեկտիվացման և նրա հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու հաջողությունները ջախջախում են ալ թեքումավորներին, վորոնք աղաղակում եյին կուսակցության սխալ քաղաքականության, կոլտնտեսական շինարարության ասպարիզում ձեռք բերած հաջո-

զուլթյունների անկայունության մասին: Կոլտնտեսությունների արագ կազմակերպման և ամրապնդման արագ տեմպերը ջախջախում են աջ ոսկորտունիստների բոլոր ասածները:

Կուսակցությունը վճռական ու հաջող պայքար մղեց «ձախ» թեքման խոտորումների և նրանց հանդեպ հաշտվողականութուն ցույց տալու դեմ:

Այժմ լիակատար վստահությամբ կարելի չէ ասել, վոր կազմակերպված կոլտնտեսություններն ամրապնդվել են: Վողջ խնդիրն այժմ կայանում է կոլտնտեսությունների հրակայակման ուժերն ու հնարավորությունները ռացիոնալ ոգտադործելու մեջ:

ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂԻՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ Ե

Այժմ անհրաժեշտ է կոլտնտեսությունների արտադրական բոլոր հնարավորություններն ու հսկա ուժերն ոգտադործել: Պահանջվում է նպատակահարմար կազմակերպում և ուժերի ձիշտ դասավորում:

Կոլտնտեսական շինարարության ամրապնդման հիմնական լծակներից մեկը հանդիսանում է աշխատանքի ուղիղ կազմակերպումը:

Մենք հաճախ ասում ենք, թե պետք է կոլտնտեսության աշխատանքն ուղիղ և լավ կազմակերպել: Այս խոսքերը թեև հասարակ խոսքեր են, բայց նրանց իմաստը, գործնական նշանակությունն ու ելությունը հասարակ չեն:

Իսկ ի՞նչ բան է և ի՞նչ է նշանակում կոլտնտեսությունների աշխատանքն ուղիղ ու լավ կազմակերպել:

Ասխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում

դա այնպիսի գործ է, վորի կատարելը մանրամասն ու խորն ստուգում, լուրջ գործնական փորձառություն չիլ գործին տեղյակ լինել և պահանջում:

Աշխատանքի կազմակերպման գործում շատ կոլտնտեսություններ մեծ հաջողություն են ձեռք բերել: Կան մի շարք կոլտնտեսություններ, վորոնք աշխատանքի կազմակերպման մեջ շատ ճեղքվածքներ ունեն:

Անհրաժեշտ է գտնել կոլտնտեսությունների մեջ աշխատանքի կազմակերպելու ճիշտ նախադրյալներ. մեզ պետք է աշխատանքի կազմակերպում, վորը հնարավորություն տա ամենալայն քախավ ոգտադործելու արտադրության միջոցները չիլ կոլտնտեսականի աշխատանքը մախսանքը (ամենաշատ) արդյունավետ դարձնել: Կոլտնտեսականի աշխատանքը լավ և ոգտավետ դարձնելով, մենք լավ ել ոգտադործած կլինենք կոլտնտեսությունների ունեցած արտադրական ուժը:

Նախորդ բոլշևիկյան դարնանացանի, կոլտնտեսական առաջին ցանքի և հունձի ժամանակ մեր կոլտնտեսություններն ի՞նչպես կատարեցին իրենց աշխատանքը: Կոլտնտեսություններն արտադրության և աշխատանքի կազմակերպման մեջ մեծ հաջողություններ ունեցան: Այսու հանդերձ, աշխատանքի վատ կազմակերպման, կոլտնտեսականների բանվորական ձեռների թույլ ոգտադործման հետևանքով շատ կոլտնտեսություններում ձեղքվածքներ առաջ չեկան:

Հենց այս պատճառով ամեն մի կոլտնտեսության, ամեն մի կոլտնտեսականի, ինչպես նաև տեղերում կոլտնտեսությունների շինարարության ղեկավարների առաջ խնդիր է դրված լիլ ու համարձակ կերպով բաց անել աշխատանքի կազմակերպման մեջ յեղած բոլոր բեռությունները

Տեսնենք ինչպես ե կատարվում աշխատանքի կազմակերպումն առանձին կոլտնտեսություններում: Ահա Կենտրոն. Սևահողային մարզի կոլտնտեսություններից մեկը, «Պրոլետարիատի հաղթանակ» կոլտնտեսությունը: Հաճարի մի հեկտարի մշակման վրա (վարել, տափանել, ցանել, հնձել, կախել ու կրել) ծախսված է 15 բանվորական ուր, իսկ Միջին Վոլգայի մի այլ կոլտնտեսության հաճարի մի հեկտարի վրա ծախսվել է 23 բանվորական ուր, «Իլիչի կոմունա» կոլտնտեսությունը ծախսել է 25 բանվորական ուր:

Ուկրաինայում մի կոլտնտեսություն հաճարի մի հեկտարի վրա ծախսել է ընդամենը 13—14 բանվորական ուր:

Մի հեկտար հաճարի մշակության համար անհրաժեշտ աշխատանքի նորմալ քանակը 15 ուր է: Այս չափից յեղնելով, Կենտրոնական Սևահողային մարզի կոլտնտեսությունը, վորը 15 ուր է ծախսել, բանվորական ուրի ճիշտ ծանրաբեռնման մակարդակին հասել է, իսկ Ուկրաինայի կոլտնտեսությունը, վորը ծախսել է 13—14 ուր մի հեկտարի մշակման համար, ծախսվող բանվորական ուրի այսպես կոչված՝ գյուղատնտեսական ստանդարտ (կայուն, վորողված) չափից անցել, նորման դերակատարել է:

Սրանից պետք է յեզրակացնել, վոր տնտեսության ուղիղ կազմակերպման դեպքում կարելի յե չեղած հաջողությունների հասնել:

Շատ հետաքրքիր է ուսանելի որինականեր տալիս են Հյուսիսային Կովկասի կոլտնտեսությունները: Ինչպիսի դրություն է այնտեղ: Մի կոլտնտեսության մեկ հեկտարի վրա ծախսվում է 18 բանվորական ուր, իսկ մի այլ կոլտնտեսության—48 ուր, խոշոր տարբերությունը իսկույն աչքի յե ընկնում: Պարզվել է, վոր 48 աշխատանքային ուր ծախսած կոլտնտեսության մեջ աշխատանքի կազմակերպումը ցածր աստիճանի վրա յե դրված:

Աշխատանքի չգնալու դեպքեր են յեղել այնտեղ: Աշխատել են ծույլ ու վատ: Աշխատող անասունները լավ չեն ոգտագործվել: Աշխատել են վոչ հավասար, բայց հավասար ստացել են: Ծույլեր ու հասարակական աշխատանքի հաշվին ապրելու սեր ունեցողներ են յեղել այնտեղ:

Բանվորական ուրի ուղիղ ծանրաբեռնման հետ կապված են մյուս խնդիրները: Յեթե մի կոլտնտեսականի տրամադրությամբ տակ դրված է 2 կամ 4 ձի, այդ կոլտնտեսականը աշխատանքի ծանրաբեռնումն ուղիղ կատարի է իրա աշխատանքը բարեխիղճ անի, ապա նա կկարողանա մշակել մեկ ու կես հեկտար հող:

Մի այլ կոլտնտեսական, աշխատանքի վոչ ճիշտ կազմակերպման դեպքում, չի կարողանա մի հեկտար ել մշակել: Այդպիսով մի ձիու աշխատանքը վոչ թե մեկ ու կես հեկտարի հավասար կլինի, այլ մեկ հեկտարի: Պակաս դեր չի խաղում նաև կոլտնտեսության ղեկավարության կազմակերպումը: Յեղել են դեպքեր, յերբ մի ղեկավար յերկու կոլտնտեսականի յե ղեկավարել. մի այլ տեղ մեկը 10-ի յե ղեկավարել, մի ուրիշը 15-ի ղեկավար է հանդիսացել, չորրորդը 30-ի: Այս ամենն աղղում է արտադրության և աշխատանքի արտադրողականության վրա. մարդիկ դեռ ուղեն են վազում, ցանում են ու թվում է թե ամեն ինչ կանոնավոր է: Վերջնական հաշվի ժամանակ յերբ տեսնում են, թե ինչքան աշխատանքային ուր է ծախսված, ապա և դարձում են ինչպե՛ս աշխատանքային ուր է ծախսված, մի կոլտնտեսության 60 հաղար աշխատանքային ուր է ծախսված յեղել, այն ինչ մի ուրիշը 60 հաղար աշխատանքային ուրով 4 հաղ. հեկ. ցան է արել: Ինչ խուճ, վոր սա անմիջապես կաղղի բաշխման վրա: Աշխատանքային ուրը սակավարդյունք է դառնում: Հացահատիկային կոլտնտեսության մեկ աշխա-

տանքային որը արժենում է 50 կոպ., իսկ նրա մոտի նույն պայմաններում գտնվող մի այլ կոլտնտեսություն աշխատանքային որը արժենում է 1 ու. 20 կոպ., յերկրորդը 1 ու. 40 կոպ.:

Այսպիսի դրույթները դալիս է ասելու, վոր աշխատանքի կազմակերպման հարցը կարևոր հարցերից մեկն է հանդիսանում: Զի կարելի ասել, թե այդ խնդիրը մենք արդեն հաղորդվածք լուծել ենք: Այն կոլտնտեսությունները, վորոնք աշխատանքի նորմաները կատարել են, ունեցել են աշխատանքի լավ կազմակերպում: Աշխատանքի արդյունքի նորմաներ ունենալն ու կատարելը դրական ազդեցություն են ունենում աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացման և աշխատանքի ուղիղ ոգտադործման վրա:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔԱՆԱԿԻ ՈՒ ՎՈՐԱԿԻ ՇԻՄԱՆ ՎՐԱ

Շատ կոլտնտեսություններում աշխատանքի նորմաները չեն պահպանվել. նրանք ընտանեավարի յեն կատարել աշխատանքը: Ահա թե ինչպիսի լոզունգ է բաց թողնված մի շարք կոլտնտեսություններում. «Մենք բոլորս ել ջանք ենք թափում, լավ աշխատում, ինչացու յե նորման, հաշիվը խթանելն ավելորդ է, ենպես ել լավ աշխատում ենք»: Այս լոզունգը բաց եր թողնված հետաճնաց կոլտնտեսությունների մեջ: Պարզ է, վոր այդպիսի լոզունգը կոլտնտեսությունների շինարարությանը կարող է միայն ֆլաս հասցնել, ոգնել կուլակներին:

Այս յերևույթն ապացույց է, վոր կոլտնտեսականները դեռ ևս արտադրական գաստիարակություն չունեն, նրանք

դեռ ևս չեն դիտակցել ու չեն հասկացել արտադրություն եյուլյունն ու կարևորությունը:

Արտադրությունն ընտանեվարի չի կազմակերպվի: Արտադրությունը պեճ է կազմակերպել կասարված աշխատանքի ֆանակի ու վորակի հիւան վրա: Միայն այն ժամանակ դու կոլտնտեսության ու կոլտնտեսականների բարեկամը կլինես, յերբ արտադրության նորմաները կասարես, յերբ արտադրողականությունը բարձրացնես:

Գործավարձ գործադրող կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականության բարձրացումը հրաշալի արդյունքներ է տալիս: Բերեմ մի քանի փաստեր. վերջնենք Ուկրաինայի «Պրոգրես» կոլտնտեսությունը: Նրանք ճակնչեղ են մշակում: Մի վորոշ աշխատանքի վրա յեթե մինչև գործավարձի գործադրումը սպառվում եր 28 աշխատանքային որ, գործավարձի գործադրումից հետո ծախսում եյին արդեն 16 աշխատանքային որ միայն, մի այլ աշխատանք, վորը կատարվում եր 16 աշխատանքային որվա ընթացքում, սկսեցին կատարել 10 աշխատանքային որվա ընթացքում:

Յերկրորդ որինակ. Սաորին Վոլդայի «Լենինյան ուղի» կոլտնտեսությունը. քանի գործավարձ չեր մտցված, տեղափոխում եյին 11 դեզի խուրձեր, գործավարձի կիրառումից հետո տեղափոխում եյին արդեն 22 դեզ:

Ի՞նչ է ցույց տալիս այս որինակը: Սա ասում է այն մասին, թե գործավարձի կիրառումն ոժանդակում է աշխատանքի ուղիղ կազմակերպման և արտադրողականության բարձրացմանը: Ի՞նչ է նշանակում 22 դեզ: Սա նշանակում է հունձի աշխատանքները 2 անգամ ավելի արագ կատարել, ցորենը չփչացնել: Ամեն մի կոլտնտեսական դիտե, թե խուրձերը վորքան ուշ դիզվեն, այնքան ել ցորենի կո-

բուստը մեծ կլինի: Չե՞ վոր կարող ե տնձրե դալ ու ցորենը փշացնել:

Բացի նյութական ոգուտից, վորը կստանա կոլտնտեսականը, բացի կոլտնտեսութեան ինվենտարի նպատակահարմար գործադրումից, կոլտնտեսականներն աշխատանքի արտադրողականութեանը բարձրացնելով, կառնպանեն վողջ արտադրանքը և այդպիսով կմեծացնեն այն գումարը, վորը պիտի բաժանվի իրենց մեջ:

Որինակի համար վերցնենք «Գիգանտ» կոլտնտեսութեանը, ուր անցյալում աշխատանքը ճիշտ կազմակերպված չեր: Սա ծխախոտական կոլտնտեսութեանն է: Արտադրութեան նորմաներին համաչափ, նա վողջ արտադրութեանը վարելու համար 237 մարդու պետք ունեւ: Նա ունեւ 301 աշխատող ձեռք-կոլտնտեսական և 17 ել վարձովի բանվոր: Չնայած այս քանակին, կոլտնտեսութեանը բանվորական ուժի պակասը 30 տոկոս եր հաշվում: Ի՞նչով ե սա բացատրվում: Շատ հասարակ. կոլտնտեսականներն արտադրութեան նորմաները չեյին կատարում և հսկողութեանը վատ եր կատարվում: Աշխատանքի կազմակերպումն ել բոլորովին անպետք եր: Փոխանակ աշխատանքն առավոտյան ժամի 4-5-ին սկսելու, սկսում եյին 7-8-ին: Բայց սա չի նշանակում, թե կոլտնտեսականներն աշխատանքը 7-8-ին սկսելով և այդ ժամին եյին արթնանում: Վէ՛հ, նրանք վեր եյին կենում ժամի 4-ին. փոխանակ աշխատանքի անցնելու, նրանք շատ ժամանակ եյին կորցնում նախապատրաստվելու, աշխատանքը բաժանելու վրա. հետո պետք եր լինում ձիւքերը վորոնել, գութանները սարքել, յերկաթաթել պատրաստել: Աշխատանքը փաստորեն սկսում եյին վող թե 7-ին, այլ 9-ին:

Չնայած շատ ջանք թափելուն, աշխատանքի նորմաները չեյին կարող կատարել:

Ո՞վ ե մեղավորը: Արդյոք կոլտնտեսականները, թե՛ վարչութեանն և մեղավորը, կամ գուցե սրա պատճառը ընդհանրապես կոլտնտեսութեանների շինարարութեանն է:

Ի՞նչ կարելի յե ասել կոլտնտեսութեանների մասին: Փորձը, փաստերն ասում են, վոր արտադրութեան միջոցների կոլեկտիվ ոգտագործման շնորհիվ վող միայն կարելի յե անցյալում սահմանած նորմաները կատարել, այլ և հնարավոր ե գերակատարել: Կոլտնտեսութեանների կյանքից վերցրած փաստերը համոզեցուցիչ կերպով այդ են ասում:

Շատ կարելի յե կոլտնտեսականն և մեղավորը:

Կոլտնտեսականին աշխատանքով չեա վախեցնի: Գիտակից կոլտնտեսականն աշխատանքից չի փախչի: Ինչհետև ե բանը: Հիմնականը կայանում ե նրանում, վոր կոլտնտեսականները յերբեմն չեն ըմբռնում կոլտնտեսութեան արտադրական խնդիրները: Դասակարգային թշնամին իր բոլոր ուժերը լարում ե կոլտնտեսութեանների շինարարութեանը քայքայելու համար: Դասակարգային թշնամին ձգտում ե խեղաթյուրել տնտեսութեան ուղիղ կազմակերպումը. նա աշխատում ե անփորձ, վող գիտակից կոլտնտեսականին համոզել, վորպեսզի նա կոլեկտիվ տնտեսութեան վարելու ֆլասակար ձևեր գործադրի: Այդ ձևերն ու միջոցները, շատ անդամ, թվում ե թե ուղիղ են, բայց իրականում դրանց գործադրումը կարող ե կոլտնտեսութեան տանել դեպի կործանում:

Ակտիվ կոլտնտեսականները դեռեա չեն կարողացել աշխատանքն այնպես կազմակերպել, վոր կարողանան բոլոր կոլտնտեսականներին իրենց հետևից տանել:

Աշխատանքի սոցիալիստական գործադրման մեթոդները փայլուն արդյունքներ են տվել. բայց այդ մեթոդները, — սոցիալիստական մրցումը, — հարվածախութեանը, հասարա-

կից կոլտնտեսականները և չեյին ել հասկանում, վոր այդպիսով ֆեոսաւարական, կուլակային ազիտացիայի ազդեցութեան տակ եյին ընկել:

Դասակարգային թշնամին վտանգավոր չեր լինի այս դեպքում, յետե կոլտնտեսութեան անդամներն աշաւուրջ լինելին ու կովեյին կուլակային ազիտացիայի դեմ: Այդ կոլտնտեսութեան ղեկավարները դասակարգային թշնամու դեմ կովելու զգոնութեանից զուրկ եյին: Նրանք իսկական ու պորտոնիստներ եյին, կուլակների կողմնակից: Այդ մարդիկ խոսքով կողմնակից եյին կոլտնտեսութեանների շինարարութեան, խոսքով՝ յեկամուտը բաժանում եյին ըստ աշխատանքային որերի, խոսքով՝ աշխատանքի արտադրականութեանը բարձրացնելու համար եյին ջանք թափում, բայց գործնականում կոլտնտեսութեանների շինարարութեան քայքայման եյին նպաստում: Նրանց մոտ ենպես եր ստացվում, վոր քիչ աշխատողը շատ եր ստանում, իսկ շատ աշխատողը քիչ եր ստանում: Խոսքով կոլտնտեսութեան կողմնակից եյին, բայց իրականում ծուլերին ու հասարակական աշխատանքի հաշվին ապրել սիրողներին եյին խրախուսում:

Կուսակցութեանն ու խորհրդային իշխանութեանը խստիվ հրահանգել են յեկամուտի բաշխումը կատարել ծախսված աշխատանքի քանակի ու վորակի նաշխուսան հիման վրա: Ով մոռանում կամ գիտակցաբար խախտում ե այս հրահանգը՝ նա կոլտնտեսութեանների շինարարութեան թշնամին ե, կուլակի գործակալը:

Աշխատանքի արտադրողականութեան ցածր լինելու յերկրորդ պատճառը բանվորական ուժն ոգտագործելու և նպատակահարմար դասավորելու անկարողութեանն ե: Վերցնելնք հետեյալ փաստը. կոլտնտեսութեանը պետք ե կալը.

շուտ վերջացներ, վորովհետե յեղանակները վատանում եյին և աշխատանքանը կուշանար: Կոլտնտես. նախագահի ասելով՝ աշխատանքը յերեք հերթի յեր տարվում. այնինչ աշխատում եյին միայն յերկու հերթի: Ինչո՞ւ կոլտնտեսութեան նախագահի հայտարարութեանը իրականութեան չեր համապատասխանում: Վարչութեան նախագահը կարգադրել եր աշխատել 3 հերթի. բայց ինչ վոր լիազոր եր յեկած յեղել (նրա ազգանունը վոչ վոր չեր հիշում) և կարգադրել եր գիշերը չաշխատել: Գիշերային աշխատանքը տարվում եր 2 հերթի միայն, բայց կոլտնտեսութեան վարչութեանը դրա մասին տեղեկութեան չունեի:

Այս ինչ ե ապացուցում: Սա ապացուցում ե, վոր այն մարդիկ, ում կոլտնտեսութեան ղեկավարութեանն են վըստահել և վորոնք իրենց ձեռքն են վերցրել կոլեկտիվ արտադրութեան կազմակերպումը՝ արտադրութեան գիրքերը դասալքել են:

Կոլտնտեսութեան վարչութեանը պետք ե արտադրութեան դրութեանը տեղյակ լինի, տեղյակ լինի և մանր խընդիրներին. նա պետք ե իմանա ինչ դրութեան ե սերմացանը, ինչպես ե ընթանում կալը, աշխատանքը ինչպես ե տարվում այսօր, վաղը, ինչպես ե դասավորվելու բանվորական ուժը և այլն և այլն: Վարչութեանն այն ժամանակ իսկական ղեկավար մարմին կլինի, յերբ տնտեսավարի կղեկահան ղեկավար մարմին կլինի, յերբ աշխատանքները: Դժբախկավարի կոլտնտեսութեան ամեն աշխատանքները: Դժբախտաբար, շատ կոլտնտեսութեանների ղեկավար մարմինները մինչև այժմ բավարար չափով չեն խորացել կոլտնտեսութեան արտադրական խնդիրների մեջ և արտադրական հարցերով քիչ են զբաղված:

Կոլտնտեսութեանների ռայոնական միավորումներն արտադրութեան կազմակերպելու գործում կոլտնտեսութեան

Զեքիին շատ քիչ են ուղևում: Ուայոնսկան կոլտնտեսական
 միությունները հաճախ չեն իմանում, թե ինչ է կատարվում
 կոլտնտեսություններում. նրանք տեղյակ չեն վոչ միայն հե-
 տավոր կոլտնտեսությունների գրությունից, այլ և ծանոթ
 չեն մոտիկ գտնվող կոլտնտեսությունների գրության հետ:

Կոլտնտեսուկթյուններից մեկ աշխատող անասունների
դրուկթյունն ու ոգտագործումը ստուգելիս պարզվեց հետե-
վյալը. Կոլտնտեսուկթյան նախադասն ասեց, թե 98 ձի ու-
նեն, բայց յերբ ստուգվեց, այլ բան դուրս յեկավ: Զիյերի
կառավարիչն ասաց, թե 92 ձի ունեն, յերբ ստուգվեց,
պարզվեց, վոր 94 ձի կա: Նախագահի ասելով, կալում. 40
ձի կա, իսկ պարզվեց, վոր 33 ձի յեն աշխատում միայն:
Սա ցույց ե տալիս, վոր մարդիկ արտագրուկթյան խնդիր-
ների մեջ խոր չեն մտնում և դբաղվում են միայն ընդհա-
նուր խնդիրներով:

Փոխանակ աշխանացանի աշխատանքներին ողնելու, 13 ձի զբաղեցրել էյին արևածաղկի ցողուններ կրելով: Գործի այսպիսի դրությունը կոտնտեռականներին թույլ չի տալիս արտադրողականությունը բարձրացնելու, նրանց աշխատասիրությունն իզուր է կորչում: Դեպի արտադրությունը նման բյուրոկրատական և անհող վերաբերմունք ունենալը կոտնտեռությունների շինարարության շատ թանգ է արժենում:

Ի՞նչ անել: Հրահանգներով ու հրամաններով նման անկարգութշույնները չեն վերացվի: Անհրաժեշտ է կոլտնտեսականների հսկողութիւնը: Կոլտնտեսականները դեռ ևս չեն հասկացել, զոր ամին մի կոլտնտեսական արտադրութեանը պատասխանատու յի: Մոբիլիզացիայի պէ՛տ է յեմ-քաղկել մասսայի յեւ ամեն մի կոյսնեսականի ակտիվութեանը: Ամեն մի կոյսնեսականին պէ՛տ է Բաւել կոյսնեսութեանը

աւրադուրջան վրա հսկողութիւնն ունենալու գործի մեջ, Սրա-
նով կողտնտեսութեան նախագահի և վարչութեան անդամ-
ները պատասխանատուութիւնը կրարձրանաւ: Այլապաւնքը
գործնական կերպով կազմակերպելու տեսակետից սա յեր-
րորդ և հիմնական խնդիրն է:

ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՅԱԿԱՆԸ ՎՈՐԱԿՆ Ե

Ամեն մի կողտնտեսական պետք ե նախադես իմանա, թե ինքն այս կամ այն աշխատանքի ընթացքում ինչ և ինչ-քան գործ պիտի տեսի: Յեթե կողտնտեսականը նախապես չիմանա, թե ինչ և ինչքան է անելու, յեթե նա արտադրա-կան առաջադրանքի մասին ճշգրիտ պատկերացում չունենա, կան առաջադրանքի մասին խնայողաբար ու պատշաճ պահ-նա անկարող կլինի իր արտադրական լարվածությունը պահ-պանել, չի կարողանա իր ուժերը խնայողաբար ու պատշաճ կարողանա առաջադրությունը կատարել կամ գեթակատարել: Ուժերը խնայողաբար ծախսելու համար պետք է գիտենալ, թե ինչ պետք է անել, վո՞ր արտը դնալ, ինչ աշխատանք կատարել, ինչ ինվենտար գործադրել: Մասնագիտացման խնդիրը, մի կողտնտեսականի տեղական կեբազմ մի վորոշ աշխատանքի դնելը հանդիսանում է աշխատանքի արտա-դրողականությունը բարձրացնելու կարևոր և լավագույն մի-ջոցներից մեկը: Ամեն մի կողտնտեսական պետք է մի վորոշ ջոցներից մեկը: Ամեն մի կողտնտեսական պետք է մի վորոշ ճյուղ լայնորեն ուսումնասիրի, մեքենաները լավ իմանա, ճյուղ լայնորեն ուսումնասիրի, մեքենաները լավ իմանա, ինչ բան է տրակտորը, ցանիչը, գութանը, տափա-նը, իմանա, թե այս կամ այն դեպքում քանի վեբշոկ խո-րությամբ պետք է արտը վարել և այլն և այլն:

Լուծյամբ պես՝ և արտը վարձի՝ և այլն
Կոյսն անտակամի՝ ածխասանի՝ ելականը՝ վորակն ե։ Յնթն
Ջանակի՝ տեսակետից մենը շատ և արագ
յնթն կոլտնտեսականների հիմնական աշխատանքի



արտադրողականութեան չեղած ու չլսված որինակներ ե
ցույց տալիս, ապա աշխատանքի վառակի տեսակետից, լավ
աշխատելու տեսակետից դեռ յեվմ քիչ բան եմք արել: Այստեղ
մենք ներկայումս ունենք:

Մեր ուղարկութեանն այժմ պետք է կենտրոնանա աշ-
խատանքի վորակը բարձրացնելու խնդրի վրա: Վերցնենք
ցանը: Յեթե վաղն անուշադիր ու վատ կատարենք ու շատ
կոշտեր թողնենք, ապա հետագա աշխատանքը, տափանելը,
ցանը կպահանջեն ուժերի մեծ վատնում: Մեքենայի փշա-
նալու կամ նրա մասերի ջարդվելու դեպքեր ել կարող են լի-
նել, բացի մեքենայի կտրվելուց, իսկ դա անշնորհք վարի
արդյունք է, բերքն ել վատ կլինի:

Աշխատանքի ցածր վորակը միայն այդ աշխա-
տանքը կատարողի համար չէ վատ. դա վողջ կոլտնտեսա-
կան շինարարութեան համար մի դժբախտութիւնն է: Շատ
դեպքերում վարելու վրա թափված աշխատանքը շատ է լի-
նում և նորման լրացված, բայց վարը վատ կատարած լի-
նելու հետևանքով ցածր բերք կտացվի ու վողջ կոլտնտե-
սութիւնը կտուժի: Յեթե հարկավոր ցանիչը ճիշտ սարք-
ված չէ և զրա պատճառով 7 փթի փոխարեն 9 փութ է
ցանվում, ապա բացի նրանից, վոր 2 փութ սերմացուն ա-
վելի կծախսվի, այլևս արտն ել խիտ լինելու պատճառով յե-
զանակների չորութեան դեպքում հեկտարից 60—70 փութ
ստանալու փոխարեն միայն 20 փութ կստացվի: Ահա
այս փաստը, սերմացանը ճիշտ չսարքելը, լավ ցան չանելը
ցույց է տալիս, վոր չնայած կոլտնտեսութիւնների քանա-
կապես շատ աշխատելուն, աշխատանքի արդյունքը ցածր
կլինի: Վատ ցանը վատ ել հունձը կտա, կոլտնտեսականի
աշխատանքի արտադրողականութիւնը կիջնցնի, նրա յե-
կամուտը կփոքրացնի:

Կոլտնտեսութեան արտադրութեան ամենակարևոր մո-
մենտները մեկը հնձելն է: Յեթե խուրձ կապող մեքենան
լավ սարքված լինի, ապա նրա աշխատանքն ել լավ ար-
դյունք կտա. հակառակ դեպքում թեկերը կկտրատվեն, մա-
գաղը չի կտրի, ցորենը կտրորվի ու շատ ցորեն իգուր կը-
կորչի: Յեթե խուրձկապ մեքենայի վրա նստեցնենք նրա
աշխատանքին վող հմուտ մարդու, ապա մեքենան կփշանա
կամ ցորենը լավ չի հավաքվի:

Վերցնենք աշխատանքի մի այլ տեսակը—խուրձերի
կրելը: Սա կարծես թե վորակավոր աշխատանք չի պահան-
ջում: Պետք է յեղաններով վերցնել, սայլի վրա դարսել ու
տանել: Վոչ, դա հասարակ աշխատանք չի: Յեղաններով վատ
աշխատելիս ցորենի 10 տոկոսը կարող է թափվել: Կարելի յե
այնպես աշխատել, վոր ցորենը չկորչի: Յեթե խուր-
ձերն անշնորհք դասավորվեն, ապա կես վերստ դնալուց հե-
տո նրանք կքանդվեն. լավ շարված լինելու դեպքում աղա-
հով տեղ կհասնեն: Յերկու դեպքում ել հավասար աշխա-
տանք է թափվել, կոլտնտեսականները հավասար ենեղգիտ
յեն ծախսել, բայց մեկի աշխատանքը վորակով ցածր ար-
դյունք է տվել, յերկրորդինը, ընդհակառակը, բարձր:

Կալսիչ մեքենան գյուղատնտեսական կարևոր ինվեն-
տար է: Մենք ցանել սովորել ենք, բայց հնձել՝ դեռ ևս վող:
Անցյալ տարվա հունձը ցույց տվեց, թե վորքան բարդ գործ
է նա: Պարզվեց, վոր կոլտնտեսականները շատ անգամ ծա-
նոթ չեն հնձելու նոր ձևերի հետ: Անցյալ տարի մենք լավ
ցանեցինք, բայց վաս հնձեցինք:

Խնդիր կայանում է բոլեփիկյան ցանը ներքի կազմա-
կերպելու յեվ հունձի աշխատանքները ժամանակին ու լավ
կատարելու մեջ: Յոքենի վող մի հասիկ չափի կորչի:

Կալսիչ մեքենան զանազան տեսակ կարելի յե ոգտա-

գործել: Շատ անգամ ցորենի 5 տոկոսը մնում է դարմանի մեջ. լինում են դեպքեր, յերբ թվում է, թե կալսը հաջող է ընթանում: Մեքենան աղմկում է, դարմանը դուրս թափվում, բայց ցորենի պարկի մեջ ցորեն քիչ է լցվում. ցորենի մի մասը մնում է դարմանի մեջ: Պարզ է, վոր այսպիսի աշխատանքը վորակով ցածր է:

Մի այլ դեպքում կալսիչը լավ է աշխատում, դարմանի մեջ ցորեն չի մնում, բայց վենտիլյատորները վատ աշխատանքի պատճառով ցորենը մղեղի հետ է խառնվում. չնայած, վոր կալսիչի մոտ կանգնած է լինում կալսիչի դեկավարը, բայց նա չի մտածում կալսիչը կարգի բերելու մասին: Պարզ է, վոր այս դեպքում ևս աշխատանքի վատ վորակի պատճառով կտուժի արտադրությունը:

Ուկրաինայի կոլտնտեսություններեց մեկի կալսիչը լավ եր աշխատում: Խուրճերը կալսիչի դարակի վրա դնում եյին յեղաններով: Յեղանները կոթերի վրա լավ ամրացրած չեյին ու դուրս եյին թռչում: Կալսիչի վրա աշխատող կոլտնտեսուհին խուրճի կապերն եր կտրում և բարաբանի մեջ գցում խուրճը: Լավ է, վոր ուրիշները նկատեցին, թե յեղանը մնացել է խուրճի մեջ ու խուրճը հետ եյին քաշել ժամանակին:

— Ի՞նչ է, յես պարտական եմ նայել, վոր խուրճերի մեջ յեղան մնացած չլինի. թող նրանք հետևեն, վորոնք խուրճերն են դնում դարակի վրա. իմ գործը կապեր կլտրեն է, — պատասխանեց կոլտնտեսուհին, յերբ նրան հիշեցրին իր անփութ Վերաբերմունքի մասին:

Կոլտնտեսուհին իրավացի՞ պատասխան է տվել: Պարզ է, վոր ի՞նչ: Սա կոլտնտեսության արտադրության հանդեպ անհոգ, անգիտակից վերաբերմունք ունեցողի արտահայտություն է: Յեթե յեղանը կալսիչի մեջ ընկած լինեք, ապա

դա մեծ դժբախտություն կլինեք ամբողջ կոլեկտիվի ու արտադրության համար: Մեքենան մի քանի օրով կդադարել և աշխատելուց, կալսիչը կյերկարեք ու դաշտում մնացած ցորենը կփչանար:

Սերմացումն լավ բերքի հիմքն է: Իսկ ի՞նչ ենք անում սերմացույի հետ: Շատ անգամ սերմացույի զտումը կատարում ենք արտ դնալուց քիչ առաջ: Այնինչ սերմերի զտումը լավ է կատարել կալսից հետո կամ աշնանը և պահել առանձին ամբարների մեջ: Յեթե ցորենը չմաքրվի և այդպես պահվի մինչև դարնանը, ապա նա իր վորակը և ծրելու ուժը կկորցնի ու վատ ել բերք կտա:

Սերմացուն ամբար լցնելուց անմիջապես հետո պետք է հսկողություն հաստատել նրա վրա, հետևել, վոր չայրվի և և մեջը ֆսաստուռներ առաջ չգան:

Ցանելուց առաջ պետք է սերմացույի ծրելու կարողությունը ստուգել: Շատ անգամ պատահում է, վոր 7-8 փութ ցանում են, բայց արտը կարծես մերկ լինի: Սա բացատրվում է նրանով, վոր ղեկավարները բավարար չափով չեն խորանում արտադրության մեջ:

Կոլտնտեսականների մեծ մասը, գյուղատնտեսությունից վաս հասկացողներ չեն: Նրանցից շատերը հրաշալի հասկանում են, քե ինչ բան է արտադրությունը, քե ինչպես պեժ է վարվել սերմացույի հետ, ինչպես խնամել անասուններին, ինչպես ցանել ու մեակել արք:

Ձեռք բերած փորձառության ու հմտության հիման վրա պետք է ձգտել աշխատանքի արտադրողականությունն ել ավելի բարձրացնել, աշխատանքի վորակը բարելավել:

Անհրաժեշտ է անասնապահության վրա ուշադրություն դարձնել: Անասնապահության հրաշալի արդյունքների հետ միասին, մի շարք կոլտնտեսություններում, մանավանդ

մատչալ անասունների խնամքի հարցում շատ բացասական կողմեր ունենք: Խնչով պետք է բացատրել դա: Դա բացասվում է աշխատանքի վատ վորակով և անասունների անպիտան խնամքով:

Կոլտնտեսություններից մեկում, կոլտնտեսական անասուններին ջրելու յեր տարել, բայց չեր նայել խմում են նրանք, թե վոչ: Սառույցի մեջ բացած խմելու տեղերը սահել եյին ու անասունները ծարավ հետ եյին դարձել: Կոլտնտեսականը չեր հետևել անասունների խմելուն ու մտածում եր, թե «անասունը մարդուց հիմար չե, նա ջուր խմել էլ դիտե»:

Վերցնենք հետևյալ որինակը: Ուրալի կոլտնտեսություններից մեկի հորթերն սկսեցին սատկել: Յերկու շաբաթվա ընթացքում 10 հորթ սատկեց: Հորթերի սատկելը ինչով է բացատրվում:

Կոմյերիտական բրիգադա յեկավ:—պատասխանում է հորթերին նայող կոլտնտեսուհին,—բրիգադայի անդամները հորթերին նայեցին: Ե՛հ, մտածում եմ, հորթերին նայելուց լավ բան չի ստացվի: Յեւ իսկապես, հորթերն սկսեցին սատկել: Աչքով տվին:

Նրա կողքին կանգնած անասնապահն ու գյուղատնտեսը սկսեցին ծիծաղել կոլտնտեսուհու անհավատության վրա: Բայց ի՞նչ եր արել այդ անասնապահը, վորպեսզի կոլտնտեսությունը աղատ պահի այդպիսի ֆլամներից: Նա վոչինչ չեր արել: Սա ցույց է տալիս, վոր մասնագետ անասնապահը իմանալով հորթերի սատկելու պատճառը, կոլտնտեսության չեր ոգնել անասունի ընկնելու դեմ կովելու համար, կոլտնտեսուհիներին չեր բացատրել սատկելու պատճառն ու միայն կարողանում եր ծիծաղել կիսազրեւ կոլտնտեսուհու վրա: Սա ի՞նչ է ցույց տալիս. սա ցույց է տա-

լիս, վոր կոլտնտեսությունն ու կոլտնտեսականներն այդ մասնագետին չեն ստիպել աշխատել այնպես, ինչպես հարկավոր է, վոր նա աշխատի:

ՍՈՑՄՐՅՈՒՄՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒԵԿՏԻՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ամեն մի կոլտնտեսականի համար հասկանալի յե, վոր առանց կոլեկտիվ տնտեսության պակասությունների դեմ խիստ կերպով կովելու հնարավոր չե նոր հաջողություններ ձեռք բերել. հնարավոր չե կառավարության և կուսակցության կողմից կոլտնտեսություններին առաջադրած խնդիրներն իրագործել:

Բոլոր կոլտնտեսականների և կոլտնտեսությունների դեկավար մարմինների պարտականությունն է մոբիլիզացիայի յենթարկել կոլտնտեսականների վողջ ափսոսվածությունը, վորպեսզի կոլեկտիվ արտադրության ամրապնդման գործը վերջնականապես ապահովենք:

Աշխատանքի կազմակերպման ամբողջ սխտեմը կոլտնտեսություններում պետք է կառուցվի աշխատանքի սոցիալիստական մեթոդների վրա: Մի խումբ կոլտնտեսությունների կոլտնտեսականները պետք է լավ կոլտնտեսությունների կոլտնտեսականների նախաձեռնությամբ ընդառաջ դնան և յուրացնեն:

Բոլոր կոլտնտեսականներին պետք է սոցմրցման ու հարվածայնության մեջ ընդգրկել: Աշխատանքի այս ձևերի գործադրումը՝ կոլտնտեսությունների մեջ տարվող կուլակային ֆուսարարության ամենալավագույն պատասխանն է:

Արդեն միլիոնավոր կոլտնտեսականներ աշխատում են սոցիալիստական աշխատանքի ձևերի հիման վրա: Նրանց

համար սոցմրցումն ու հարվածայնությունը կոնկրետիվ արտադրութեան մասնակցելու հիմնական ձևերն են հանդիսանում: Այդ ակտիվիստ-ենտուզիաստները*) կոլտնտեսականների մնացյալ մասին իրենց հետևից են տանում: Ակտիվիստ ենտուզիաստների հաստատակամ ու համառ աշխատանքն որինակ է հանդիսանում, միլիոնավոր կոլտնտեսականներ իրար հետ սոցմրցման մեջ են մտնում ու հարվածայնութեամբ աշխատում:

Բացի կոնկրետ արտադրության կազմակերպումից, կոլտնտեսությունները պետք է լավագույն կոլտնտեսականներին ուղարկեն արդյունաբերություն, սոցիալիստական ձեռնարկների մեջ աշխատելու: Կոլտնտեսականների արդյունաբերություն զնալ աշխատելու խնդիրը պետք է բոլոր կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին մասսայական ուշադրության առարկա դառնա: Սոցիալիստական արդյունաբերությունից աճը՝ կոլտնտեսությունների մեջ նախապես ուժով պինդորոտվող չտեսված հնարավորություններ է ստեղծում: Կոլտնտեսությունների և նրանց արտադրության արագ դարձացումն ու ամրապնդումը կախում ունի արդյունաբերության աճումից: Կոլտնտեսությունները դեռ ևս միլիոնավոր ազատ բանվորական ձեռներ ունեն: Այդ միլիոնները պետք է արդյունաբերություն մեջ ոգտագործվեն: Արդյունաբերության մեջ աշխատելու համար կոլտնտեսականներ նշանակելու վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել:

Շատ կոլտնտեսություններում գործադրվող բանվորական ուժը 2-3 անգամ կրճատվում է:

Աշխատանքի կազմակերպման միջոցառումները հետևյալում են կայանում. առաջին հերթին պետք է վորակը բարձրացնել, աշխատանքի նորմաները կատարել, կայուն

*) ենտուզիսմ-վոգեվորություն:

աշխատավարձի սխալ սխտեմը վերացնել: Այդ բացերն այստարի դեռ ևս շատ կոլտնտեսություններում գոյություն ունեն:

Ով լավ է աշխատում, նա յե կոլտնտեսության ամենալավ, ամենաազգելի կոլտնտեսականն է: Ով շատ գործ է անում, նա յե պետք է նախաձեռնող, ղեկավարող, կոլտնտեսություն արտադրության առաջավոր կազմակերպիչը հանդիսանա: Լավագույն հարվածայններին, լավագույն արտադրողներին պետք է կոլտնտեսության ղեկավարող աշխատանքի քաշել: Ծուլներին, հասարակական աշխատանքի հաշվին ապրել ցանկացողներին, վորպես կոլտնտեսության թշնամիների, վորպես կուլակների գործակալների՝ պետք է կոլտնտեսություններէջ դուրս քշել:

Կոլտնտեսական կազմակերպությունները պետք է հարվածայնների, լավ աշխատողների, լավ կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը բարձրացնեն:

Պետք է պարզատրման հատուկ ֆոնդեր ստեղծել: Պարզատրության ձևերն ել զանազան պետք է լինեն, — դրամական պարզատրություն, ուսման ուղարկել, ամառանոցներ, հանգստյան տներ, եքսկուրսիաներ և այլն և այլն:

ԿՈՒԵԿՏԻՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՈՒՂԻ ՅԵ

Կոլտնտեսական արտադրության զարգացման հիմնական լծակը գործավարձն է: Միայն գործավարձը հնարավորություն կտա արտադրության նորման կատարել և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել: Գործավարձը պետք է աշխատանքային որերի հաշվով վճարվի: Վճարման այս ձևի մաստն ինչպես է կայանում: Ասենք թե կոլտնտեսականը

մեկ հեկտար վար ե արել, դրա համար վճարվում ե, ասենք մեկ ու կես որվա հաշվով: Յեթե կոլտնտեսականը, նույնիսկ մեկ որվա ընթացքում 2 հեկտար ե վարել, ապա պետք ե հաշվել, փոր նա 3 աշխատանքային որ ե բանել:

Ահա այն հիմնական սկզբունքը, վորը պետք է կիրառել կոլտնտեսությունների աշխատանքը կազմակերպելու մեջ։ Այս միջոցները կիրառելիս պետք է գլխավոր ուշադրությունը դարձնել աշխատանքի վորակի վրա։ Աշխատանքի վորակը պետք է մանրադննին ստուգվի ու գրվի։ Մի կոլտնտեսության այս ուղղությամբ ունեցած հաջող փորձը պետք է գործադրել մյուս կոլտնտեսություններում։ Աշխատանքի վորակը բարձրացնելու, կատարվող աշխատանքն ըստ վորակի և քանակի բաժանելու խնդիրները պետք է միևրոնապիսի կոլտնտեսականները գիտակցեն։ Դրա հիման վրա կարելի չէ և պետք է արտադրության լայնացումն, ամրապնդումը կատարել։

Այդ բոլորի իրագործումը կարելի յե մի դեպքում անել միայն. կոլանտեսակաճաները կուլակներին և ֆլաստարարներին— դասարգային թշնամու դեմ կռվելու համար ել ավելի սերտ պեռք և միանան:

Ի՞նչ արտադրութիւնն ամրապնդելով, կոլտնտեսութիւնը քաղաքականապէս կամրապնդվի և զառնալով խորհրդային իշխանութեան հենարանը գոյողովմ, կկարողանա հակահարված տալ կուլակներին գործակալներին—աջ եւ ձախ» թեքումներին, վրոնք փորձում են հետամնաց կոլտնտեսականների միջոցով պաշտպանել կուլակների շահերը:

Գյուղատնտեսութեան սոցիալիստական շինարարու-
թեան ֆրոնտում մենք նոր հաղթանակների առաջ ենք
կանգնած:

